# «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ**

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297-Ն օրենքի □այսուհետ՝ Օրենք□ 4-րդ հոդվածի 4-րդ մասում «ծրագիրն է, որը Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը» բառերը փոխարինել «ռազմավարությունն է, որը կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասում, 37-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում, 48-րդ հոդվածի 1-ին մասում «պետական ծրագիր» բառը փոխարինել «պետական ռազմավարություն» բառով՝ համապատասխան հոլովաձևերով:

**Հոդված 3.** Օրենքի $37^1$-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված $37^1$. Կրթության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը**

Հայաստանի Հանրապետության կրթության բնագավառի օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը, ինչպես նաև կրթության որակի բարձրացմանը, կրթության իրավունքի պահպանմանը, պետական կրթական չափորոշիչների պահանջների կատարմանն ու կրթական ծրագրերի յուրացման ապահովմանը աջակցումն իրականացնում է կրթության բնագավառում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը՝ կանխարգելիչ, վերահսկողական, հետադարձ կապի ապահովման և

օրենքով սահմանված այլ գործառույթների միջոցով:»:

**Հոդված 4.** Օրենքի 37-րդ հոդվածը լրացնել նոր՝ 14.1-ին և 14.2-րդ կետերով.

«14.1) սահմանում է կրթության կառավարման տեղեկատվական համակարգի վարման կարգը.

14.2) մշակում, ներդնում և վարում է կրթության ոլորտի պետական վարչական ռեգիստրները.»:

**Հոդված 5.** Օրենքի 43-րդ հոդվածի 7-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 6.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: